ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ՔԱՂՍԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Քաղսի համայնք,
ՀՀ Կոտայքի մարզ, գ. Քաղսի, 6-րդ փող.1,
Հեռ. 098-910-932 , qaxsi.kotayk@mail.ru

N 031-140
14 հունիսի 2021թ.

ՀՀ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶՊԵՏ
ԱՀԱՐՈՆ ՍԱՀԱԿՅԱՆԻՆ

Հարգելի պարոն Սահակյան.

Ներկայացնում ենք Քաղսի համայնքի ղեկավարի կողմից 2021 թվականի ընթացքում ընդունված որոշումները՝ մայիսի 17-ից մինչև հունիսի 08-ը ներառյալ:

Առդիր՝ 12 թերթ:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ռ. ԳՐԻԳՈՐՅԱՆ

Կատ. Լ. Խաչատրյան
091535275

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ՔԱՂՍԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Քաղսի համայնք
ՀՀ, Կոտայքի մարզ, գ.Քաղսի, 098-910-932, qaxsi.kotayk@mail.ru

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

17 ՄԱՅԻՍԻ 2021 թվականի N 48

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ 2021 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆԻՍԻ 20 -ԻՆ ԿԱՅԱՆԱԼԻՔ ԱՐՏԱՀԵՐԹ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՄԱՐ ՏԵՂԱՄԱՍԱՅԻՆ ԿԵՆՏՐՈՆ ՀԱՏԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Ընտրական օրենսգրքի 16-րդ հոդվածի 1-ին մասով.

Որոշում եմ՝

1. 2021 թվականի հունիսի 20-ին կայանալիք Հայաստանի Հանրապետության ազգային ժողովի արտահերթ ընտրությունների համար Կոտայքի մարզի Քաղսի համայնքում ընտրական տեղամասային կենտրոն համարել Քաղսիի միջնակարգ դպրոցը՝ հասցեն՝ գ. Քաղսի 11-րդ փողոց 1-ին փակուղի, շենք 1:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՌԱՖԱՅԵԼ ԳՐԻԳՈՐՅԱՆ

2021 թ. _մայիսի _ _17_
գ.Քաղսի

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ՔԱՂՍԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Քաղսի համայնք
ՀՀ, Կոտայքի մարզ, գ.Քաղսի, 098-910-932, qaxsi.kotayk@mail.ru

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

17 ՄԱՅԻՍԻ 2021 թվականի N 49

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ 2021 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆԻՍԻ 20-ԻՆ ԿԱՅԱՆԱԼԻՔ ԱՐՏԱՀԵՐԹ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՄԱՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՏԱՐԱԾՔՈՒՄ ՔԱՐՈԶՉԱԿԱՆ ՊԱՍՏԱՌՆԵՐ ՓԱԿՑՆԵԼՈՒ ՀԱՄԱՐ ՏԵՂԵՐ ԱՌԱՆՁՆԱՑՆԵԼՈՒ և ԲՆԱԿՉՈՒԹՅԱՆ ՀԵՏ ՀԱՆԴԻՊՈՒՄՆԵՐ ԿԱԶՄԱԿԵՐՊԵԼՈՒ ՀԱՄԱՐ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Ընտրական օրենսգրքի 20-րդ հոդվածի 3-րդ մասով և <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ հոդվածի 1-ին մասի 8-րդ կետով.

Որոշում եմ՝

1. 2021 թվականի հունիսի 20-ին կայանալիք Հայաստանի Հանրապետության ազգային ժողովի արտահերթ ընտրություններին մասնակցող կուսակցությունների (կուսակցությունների դաշինքների) քարոզչական պաստառներ փակցնելու համար Քաղսի համայնքի տարածքում առանձնացնել հետևյալ անվճար տեղերը՝ Քաղսիի մշակույթի տունը, որը գտնվում է գյուղ Քաղսի 11-րդ փողոց թիվ 25, Ներքին Քաղսիի հանդիսությունների սրահը, որը գտնվում է գյուղ Քաղսի 2-րդ թաղամաս թիվ 15 հասցեում տրամադրվող մակերեսը մինչև 5քմ, Քաղսիի ժամանցի սրահ հասցե՝ գյուղ Քաղսի 6-րդ փողոց 1/1:

2. Բնակչության հետ հանդիպումներ կամակերպելու համար Քաղսիի միջնակարգ դպրոցի դահլիճն է 100 նստատեղով / հասցե գ.Քաղսի 11-րդ փողոց 1-ին փակուղի շենք 1/:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՌԱՖԱՅԵԼ ԳՐԻԳՈՐՅԱՆ

2021 թ. _մայիսի _ _17_
գ.Քաղսի

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ՔԱՂՍԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Քաղսի համայնք
ՀՀ, Կոտայքի մարզ, գ.Քաղսի, 098-910-932, qaxsi.kotayk@mail.ru

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

20 ՄԱՅԻՍԻ 2021 թվականի N 50

ՔԱՂՍԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԲՆԱԿՉՆԵՐԻՆ ԴՐԱՄԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> օրենքի 48-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով, հիմք ընդունելով Քաղսի համայնքի բնակիչներ Կարինե Վարդանյանի, Մարինե Հակոբյանի և Մեդրակ Մկրտչյանի դիմումները՝ դրամական օգնության վերաբերյալ.

Որոշում եմ՝

1. Քաղսի համայնքի բնակիչներ, սոցիալապես անապահով , Կարինե Վարդանյանին, Մարինե Հակոբյանին և Մեդրակ Մկրտչյանին տրամադրել դրամական օգնություն յուրաքանչյուրին 50 000 (հիսուն հազար) ՀՀ դրամի չափով:

2.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՌԱՖԱՅԵԼ ԳՐԻԳՈՐՅԱՆ

2021 թ. _մայիսի __ _20_
գ.Քաղսի

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ՔԱՂՍԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Քաղսի համայնք
ՀՀ, Կոտայքի մարզ, գ.Քաղսի, 098-910-932, qaxsi.kotayk@mail.ru

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

01 ՀՈՒՆԻՍԻ 2021 թվականի N 51

ՔԱՂՍԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ՏՐԱՆՍՊՈՐՏԱՅԻՆ ՄԻՋՈՑԻ ՎԱՐՁԱԿԱԼՈՒԹՅԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ ԿՆՔԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով<<Տեղական ինքնակառավարման մասին >> օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետի պահանջներով, Քաղսի համայնքի ավագանու 2021 թվականի մայիսի 18-ի թիվ 06 որոշմամբ.

Որոշում եմ՝

1.Քաղսիի համայնքապետարանի աշխատանքները կազմակերպելու համար՝ 2021 թվականի հունիսի 1-ից վարձակալել Կարեն Օհանջանյանի սեփական <<ՋԻՊ –GRAND_CHEROKEE_LAREDO >> մակնիշի , 18 OS 370 պետհամարանիշի մարդատար ավտոմեքենան:

2. Տարվա ընթացքում կատարել մեքենայի պահպանման ծախսերն, ապահովելով վառելանյութով:

3. Կարեն Օհանջանյանի հետ կնքել տարնսպորտային միջոցի վարձակալության պայմանագիր:

4.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՌԱՖԱՅԵԼ ԳՐԻԳՈՐՅԱՆ

2021 թ. _հունիսի __ _01_

գ.Քաղսի

ՏՐԱՆՍՊՈՐՏԱՅԻՆ ՄԻՋՈՑԻ ՎԱՐՁԱԿԱԼՈՒԹՅԱՆ

ՊԱՅՄԱՆԱԳԻՐ

Քաղսի համայնքապետարան <<01>> հունիսի 2021թ.
(կնքման վայրը)

Քաղսի համայնքապետարան այսուհետ՝ <<Վարձակալ>>, ի դեմս Գրիգորյան Ռաֆայել՝համայնքի ղեկավար
(կազմակերպության անվանումը) (ազգանունը, անունը, պաշտոնը)
որը գործում է համայնքային կառավարչական հիմնարկի կանոնադրության հիման վրա մի կողմից և
(կանոնադրության, լիազորագրի)

Օհանջանյան Կարեն այսուհետ՝ <<Վարձատու>>մյուս կողմից կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի
(ազգանունը, անունը) մասին:

I. Պայմանագրի առարկան

1.1. Սույն պայմանագրով՝ Վարձատուն՝ վճարի դիմաց Վարձակալի ժամանակավոր տիրապետմանը և օգտագործմանն է հանձնում ավտոմեքենան:
1.2. Տրանսպորտային միջոցի բնութագիրը՝

ա) ավտոմեքենայի մակնիշը՝ - ՋԻՊ –GRAND_CHEROKEE_LAREDO
բ) թողարկման տարեթիվը՝ 1999
գ) պետհամարանիշ՝ 18OS370,
դ) գույնը՝ սև մետալիկ
ե) թափքի տեսակը- ունիվերսալ
զ) շարժիչի համարը-XC576183
է) շարժիչի հզորությունը 140/190
ը) նույնացման համարը(VIN)-1J4GW58S3X5761831

1.3. Տրանսպորտային միջոցը Վարձատուին է պատկանում սեփականության իրավունքով, ինչը հաստատվում է սեփականության վկայագիր փաստաթղթերով՝

II. Կողմերի իրավունքները և պարտականությունները

2.1. Վարձատուն իրավունք ունի՝
2.1.1. Վարձակալից պահանջել՝ Տրանսպորտային միջոցն օգտագործելու սույն պայմանագրի պայմանների և դրա նշանակությանը համապատասխան.
2.1.2. հսկողություն իրականացնել Վարձակալի կողմից Տրանսպորտային միջոցի օգտագործման նկատմամբ.
2.1.3. եթե Վարձակալը Տրանսպորտային միջոցից օգտվում է պայմանագրի պայմաններին կամ դրա նշանակությանն անհամապատասխան, ապա պահանջել լուծելու պայմանագիրը և հատուցելու վնասները.
2.2. Վարձատուն պարտավոր է՝
2.2.1. սույն պայմանագիրն ստորագրելու պահից 3 /երեք/ օրվա ընթացքում
(թվերով և բառերով)
Տրանսպորտային միջոցը հանձնել Վարձակալին.
2.2.2. Տրանսպորտային միջոցը հանձնել վարձակալին սարքին վիճակում՝ դրա նշանակությանը համապատասխան շահագործելու համար.
2.2.3. Վարձակալին հանձնել տվյալ Տրանսպորտային միջոցի տեխնիկական անձնագիրը և մյուս փաստաթղթերը, որոնք անհրաժեշտ են դրա օգտագործման համար.
2.2.4. Վարձակալի պահանջի դեպքում անհատույց վերացնել Տրանսպորտային միջոցի թերությունները կամ համաչափ իջեցնել վարձավճարը:
2.3. Վարձակալն իրավունք ունի՝
2.3.1. պահանջել Վարձատուից՝ սույն պայմանագրի 2.2.1. կետում սահմանված ժամկետում իրեն տրամադրել Տրանսպորտային միջոցը.

2.3.2. պահանջել Վարձատուից՝ իրեն տրամադրելու Տրանսպորտային միջոցի պատկանելիքները և փաստաթղթերը.

2.3.3. պահանջել նվազեցնելու վարձավճարի չափը, եթե հանգամանքների ուժով, որոնց համար ինքը պատասխանատվություն չի կրում, Տրանսպորտային միջոցի վիճակը վատթարացել է.

2.4. Վարձակալը պարտավոր է՝

2.4.1. ժամանակին վճարել վարձավճարը՝ սույն պայմանագրի 3-րդ կետով սահմանված կարգով և պայմաններով.

2.4.2. Տրանսպորտային միջոցի վարձակալության ողջ ժամանակահատվածում այն պահպանել պատշաճ վիճակում, ներառյալ՝ ընթացիկ վերանորոգումը.

2.4.3. Տրանսպորտային միջոցի վարումը և դրա առնտրային ու տեխնիկական շահագործումն իրականացնել իր ուժերով.

2.4.4. կատարել Տրանսպորտային միջոցի պահպանման, դրա ապահովագրության, ներառյալ՝ իր պատասխանատվության ապահովագրության ծախսերը, ինչպես նաև դրա շահագործման հետ կապված ծախսերը.

2.4.5. պայմանագրի դադարեցման դեպքում 3 /երեք/ օրվա ընթացքում
(թվերով և բառերով)
Վարձատուին վերադարձնել Տրանսպորտային միջոցն այն վիճակում, ինչպես այն ստացել է՝ հաշվի առնելով բնականոն մաշվածությունը:

III. Վարձավճարը

3.1. Սույն պայմանագրով՝ Տրանսպորտային միջոցի վարձակալության համար վարձավճարը կազմում է 1000 / հազար/ դրամ:
(թվերով և բառերով)

3.2. 3.1. կետում նշված գումարը ենթակա է ամենամսյա վճարման՝ յուրաքանչյուր ամսվա 30-ից ոչ ուշ:

IV. Կողմերի պատասխանատվությունը

4.1. Տրանսպորտային միջոցով, դրա մեխանիզմներով, համասարքերով երրորդ անձանց պատճառված վնասի համար, օրենքով սահմանված կարգով, պատասխանատվությունը կրում է Վարձակալը:

4.2. Սույն պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ անպատշաճ կատարելու համար պատասխանատվության են ենթարկվում Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով:

4.3. Սույն պայմանագրով չկարգավորված հարաբերությունները կարգավորվում են ՀՀ օրենսդրությանը համապատասխան:

V. Այլ պայմաններ

5.1. Սույն պայմանագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի կամ նրանց լիազոր ներկայացուցիչների կողմից ստորագրման պահից և շարունակում է իր գործողությունը 01.06.2021-31.12.2021 ընթացքում:
(նշել ժամկետի սկիզբ ու վերջ)

5.2. Սույն պայմանագիրը կնքված է հայերեն լեզվով, 2/ երկու/ օրինակից, որոնք
(թվերով և բառերով)
ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ:

5.3. Սույն պայմանագրում բոլոր փոփոխությունները և լրացումները պետք է կատարվեն գրավոր: Պայմանագիրը պետք է ստորագրեն Կողմերը:

5.4. Սույն պայմանագրի դադարման հիմքերը սահմանվում են գործող օրենսդրությանը համապատասխան:

IX. Կողմերի հասցեները և ստորագրությունները

Վարձակալ	Վարձատու
Գրիգորյան Ռաֆայել/ Քաղաքի համայնքի ղեկավար/	Օհանջանյան Կարեն
(ազգանունը, անունը, պաշտոնը)	(ազգանունը, անունը)
գ. Քաղաքի 6-րդ փողոց թիվ 1	Ք. Երևան , Խորհրդային շրջան, Միկոյան Եղբայրներ փ5, տ 5
(հասցեն)	(հասցեն)
000328567	AM0771838 14.06.2012 005
անձնագրի սերիան, երբ և ում կողմից տրվել	(անձնագրի սերիան, երբ և ում կողմից է տրվել)
(ստորագրություն) Կ.Տ.	(ստորագրություն)

Տրանսպորտային միջոցը վարձակալության հանձնման-ընդունման ակտ

գ. Քաղսի

<<01>> հունիսի 2021 թ.

Մի կողմից Քաղսի համայքապետարանը, որպես Վարձակալ, ի դեմս համայնքի ղեկավար Ռաֆայել Գրիգորյանի, որը գործում է համայնքային կառավարչական հիմնարկի կանոնադրության հիման վրա, և մյուս կողմից Կարեն Սպարտակի (պետական հաշվառման համար 18OS370), որպես Վարձատու, կազմեցին սույն հանձնման-ընդունման ակտը հետևյալի մասին.

1. Վարձակալի և Վարձատուի միջև 08.01.2021թ. կնքված տրանսպորտային միջոցի վարձակալության մասին պայմանագրին համապատասխան՝ սույն ակտով Վարձատուն Վարձակալի ժամանակավոր տիրապետմանը և օգտագործմանն է հանձնում, իսկ Վարձակալը ընդունում է GRAND_CHEROKEE_LAREDO մակնիշի 18OS370 պետհամարանիշի (տրանսպորտային միջոցի գրանցման վկայագիր՝) գտնվում է՝ տեխնիկապես սարքին վիճակում:

2. Տրանսպորտային միջոցի հետ միասին Վարձատուն Վարձակալին է փոխանցում տրանսպորտային միջոցի գրանցման վկայագիրը:

Վարձակալ	Վարձատու
Գրիգորյան Ռաֆայել/ Քաղսի համայնքի ղեկավար/	Օհանջանյան Կարեն
(ազգանունը, անունը, պաշտոնը)	(ազգանունը, անունը)
գ. Քաղսի 6-րդ փողոց թիվ 1	Ք. Երևան , Խորհրդային շրջան, Միկոյան Եղբայրներ փ5, տ 5
(հասցեն)	(հասցեն)
000328567	AM0771838 14.06.2012 005
անձնագրի սերիան, ն՞որ և ո՞ւմ կողմից է տրվել)	((անձնագրի սերիան, ն՞որ և ո՞ւմ կողմից է տրվել)
(ստորագրություն) Կ.Տ.	(ստորագրություն)

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ՔԱՂՍԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Քաղսի համայնք
ՀՀ, Կոտայքի մարզ, գ.Քաղսի, 098-910-932, qaxsi.kotayk@mail.ru

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

01 ՀՈՒՆԻՍԻ 2021 թվականի N 52

ԳՈՐԾԱՌՆԱԿԱՆ ԴԱՍԱԿԱՐԳՄԱՆ ՆՈՒՅՆ ԾՐԱԳՐԻ ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ ԵՆԹԱԱՆԱԼԻՏԻԿ ՀԱՇԻՎՆԵՐԻ ՎԵՐԱԲԱԽՇՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով ՀՀ բյուջետային համակարգի մասին օրենքի 33-րդ հոդվածի 3-րդ մասով և Քաղսի համայնքի ավագանու 2020 թվականի դեկտեմբերի 25-ի N 40 որոշմամբ.

Որոշում եմ՝

Դասակարգման սակարկման նույն ծրագրի շրջանակներում կատարել ենթաանալիտիկ հաշիվների վերաբաշխումը՝

1. 10.7.1.54 ծրագրի 4729 <<Այլ նպաստներ բյուջեից >> ենթաանալիտիկ հաշվի <<2 000 000>> թիվը փոխարինել <<1 600 000>> թվով:

2. 10.7.1.54 ծրագրի 4267 << Կենցաղային և հանրային սննդի նյութեր >> ենթաանալիտիկ հաշվի <<0.0>> թիվը փոխարինել << 400 000>>թվով:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՌԱՖԱՅԵԼ ԳՐԻԳՈՐՅԱՆ

2021 թ. _հունիսի ___ _01_
գ.Քաղսի

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ՔԱՂՍԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Քաղսի համայնք
ՀՀ, Կոտայքի մարզ, գ.Քաղսի, 098-910-932, qaxsi.kotayk@mail.ru

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

03 ՀՈՒՆԻՍԻ 2021 թվականի N 53

ՔԱՂՍԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԲՆԱԿՉԻՆ ԴՐԱՄԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> օրենքի 48-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով, հիմք ընդունելով Քաղսի համայնքի բնակիչ Ահարոն Ավետիսյանի դիմումը՝ դրամական օգնության վերաբերյալ.

Որոշում եմ՝

1. Քաղսի համայնքի բնակիչ, սոցիալապես անապահով , Ահարոն Ավետիսյանին տրամադրել դրամական օգնություն 50 000 (հիսուն հազար) ՀՀ դրամի չափով:
2.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՌԱՖԱՅԵԼ ԳՐԻԳՈՐՅԱՆ

2021 թ. _հունիսի __ 03 __
գ.Քաղսի

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ՔԱՂՍԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Քաղսի համայնք
ՀՀ, Կոտայքի մարզ, գ.Քաղսի, 098-910-932, qaxsi.kotayk@mail.ru

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

7 ՀՈՒՆԻՍԻ 2021 թվականի N 54

ՔԱՂՍԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՏԱՐԱԾՔՈՒՄ ԳՏՆՎՈՂ ՍԵՓԱԿԱՆ ԲՆԱԿԵԼԻ ՏԱՆԸ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ կետով, Հայաստանի Հանրապետության Կառավարության 2005 թվականին դեկտեմբերի 29-ի N2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 7-րդ բաժնի պահանջներով և հիմք ընդունելով՝ Մամիկոն ժորայի Եղիազարյանի դիմումը.

Որոշում եմ՝

1. Քաղսի համայնքի վարչական տարածքում գտնվող Ժորա Մամիկոնի Եղիազարյանին պատկանող սեփական բնակելի տանը (ծածկագիր 07-063-049-005) տրամադրել հասցե՝ գ. Քաղսի 1-ին փողոց, տուն՝ 40:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՌԱՖԱՅԵԼ ԳՐԻԳՈՐՅԱՆ

2021 թ. _հունիսի _ _07_
գ.Քաղսի

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ՔԱՂՍԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Քաղսի համայնք
ՀՀ, Կոտայքի մարզ, գ.Քաղսի, 098-910-932, qaxsi.kotayk@mail.ru

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

07 ՀՈՒՆԻՍԻ 2021 թվականի N 55

ՆԱԽԱԳԾԱՅԻՆ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԸ ՀԱՄԱՁԱՅՆԵՑՆԵԼՈՒ ԵՎ ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով << Տեղական ինքնակառավարման մասին>> օրենքի 42-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի, Հայաստանի Հանրապետության Կառավարության 2015 թվականի մարտի 19-ի N596-Ն որոշմամբ, հիմք ընդունելով Մխիթար Բաղդասարյանի /հասցե՝ գ. Քաղսի 1-ին փողոց թիվ 15 / դիմումը.

Որոշում եմ՝

1. Համաձայնեցնել կառուցապատող Կոտայքի մարզի Քաղսի բնակիչ՝ Մխիթար Բաղդասարյանի նախագծային փաստաթղթերը և տալ շինարարության թույլտվություն Կոտայքի մարզի Քաղսի համայնքի 1-ին փողոց թիվ 15 հասցեում գտնվող՝ կադաստրային ծածկագիր 07-063-053-010 0.144 հա մակերեսով /նպատակային նշանակությունը՝ բնակավայրերի բնակելի տուն, սեփականության վկայական 1611218/ հողամասում ավտոտնակի կառուցման աշխատանքների համար:

2. Շինարարական աշխատանքները սկսելուց 3 (երեք) օր առաջ ներկայացնել N 2-5 ձևի տեղեկանք:

3. Սյուն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրը:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՌԱՖԱՅԵԼ ԳՐԻԳՈՐՅԱՆ

2021 թ. __հունիսի __ _07_
գ.Քաղսի

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ՔԱՂՍԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Քաղսի համայնք
ՀՀ, Կոտայքի մարզ, գ.Քաղսի, 098-910-932, qaxsi.kotayk@mail.ru

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

08 ՀՈՒՆԻՍԻ 2021թվականի N 56

ՔԱՂՍԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ԱՐՏԱՀԵՐԹ ՆԻՍՏ ՀՐԱՎԻՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> օրենքի 17-րդ հոդվածի 1-ին կետով.

Որոշում եմ՝

1. 2021 թվականի հունիսի 10-ին՝ ժամը 15:00-ին, հրավիրել Քաղսի համայնքի ավագանու արտահերթ նիստ՝ ելնելով քննարկվող հարցերի անհրաժեշտությունից:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՌԱՖԱՅԵԼ ԳՐԻԳՈՐՅԱՆ

20 21 թ. ___հունիս__ _08_
գ.Քաղսի